ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ
Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՁՕՐԱՎԱՐԱՑ
ՁՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ.

Ա. Գործողութիւնը ներկայանում է Ցազկերտի պալատի մէջ։

Բ. Գործողութիւնը ներկայանում է Մուշկան—Նիսալաւուրտի Վրանի տակը։

Գ. Գործողութիւնը ներկայանում է Վարդան Մամիկոնեանի վրանի տակը։

Դ. Գործողութիւնը ներկայանում է Տղմուտ գետի ափը մի ապառաժուտ բլրակի վերայ, ամպամած գիշեր։

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

ՑԱԶԿԵՐՏ Բ. արքայ Պարսից Հալածող Քրիստոնէից.
ՄԻՀՐՆԵՐՍԷՀ. ընդհանուր հրամանատար Պարսից.
ՈՐՄԶԴԱՆ. մոգպետ.
ԱՐՇԷՋ. պալատական Ծառայ Ցազկերտի.
ՄՈՒՇԿԱՆ—ՆԻՍԱԼԱՒՈՒՐՏ. զօրապետ Պարսից բանակի.
ԴԵՆՇԱՊՈՒՀ. Պարսկ վերակացու Հայաստանի.
ԱՐՏԱՇԻՐ. Ծառայ Միհրներսեհի.
Զօրք Պարսից.
Երկու Դահիճ Պարսից.

ՎԱՐԴԱՆ. սպարապետ Հայոց.
ԱՏՈՄ Գնունի.
ՄԱՆՈՒՃԻՀՐ Ռշտունի.
ԳԱՐԵԳԻՆ Արուանձտեան.
} Ազատանորդք այրուձիոյն Հայոց.
ՎԱՍԱԿ. մարզպան Սիւնեաց.
ՋԱՆԳԱԿ. ուրացող երէց.
ՊԵՏՐՈՍ ԵՐԿԱԹԻ. ուրացող երէց.
Ուրացող զօրք Հայոց կուսակիցք Վասակայ.
ԽՈՐԷՆ Խորխոռունի
ՀՄԱՅԵԱԿ Դիմաքսեան
ԱՐՏԱԿ Պալունի կամ Մոկացի.
ՏԱՃԱՏ Գնթունի.
ՎԱՀԱՆ Գնունի
} Ընկերակիցք Վարդանայ.
ԱՐՍԷՆ Ընծայեցի
ՆԵՐՍԷՀ Քաջբերունի
} Ընկերակիցք Վարդանայ.
ԴՍՏՐԻԿ. կին Վարդանայ.
ՎԱՐԴ. եօթնամեայ որդի Վարդանայ.
ՁՕՐԲ ՀԱՑՈՑ. կուսակիցք Վարդանայ.
ԳԱԴԻՇՈՑ Խորխոռունի.
ՏԻՐՈՑ Բագրատունի.
} կուսակիցք Վասակայ.
ՎԱՀՐԱՄ. Ծառայ Վարդանայ.
ՀԱՄԱՋԱՍՊԵԱՆ Մամիկոնեան. եղբայր Վարդանայ.

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Ա.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

(Յաղկերտի պալատումը, որ շրեղութեամբ զարդարած է ըստ Պարսկական սովորութեան).

ՅԱՂԿԵՐՏ. (Առանձին).

Շատ փտած և խարխուլ է այս գահը, քիչ ժամանակի մէջ թերևս ինձ կամ մերձաւոր ժառանգիս անդունդը պիտի գլորէ. թէև արտաքին շքեղութիւնը շլացնում է շատերին, թէև սորա վերայ նստողն անմահ է համարւում և աստուածոց որդի, Այն անդունդը որ չորս հարիւր յիսուն տարի առաջ բացւել է գահուս շուրջը, այն համաճարակ հրդեհը. որ բորբոքւում է, մի օր անշուշտ պիտի լափէ այս փտած գահն և գահակալի անյատակ անդունդը պիտի գահավիժէ, Չորս հարիւր յիսուն տարի է այն, որ մի կրօն է դուրս եկել Հրէաստանի աւերակներից, որ ըստ օրէնքում և իմ սահմանակից, դաշնակից հարևան ազգերը նորա դիրկը դիմեցին. Արևմտեան կայսրութիւնը պաշտպան է դարձել նոյն կրօնին. Հայերն իւրեանց տոկունութեամբ և քաջութեամբ խոր արմատ դցեցին այդ կրօնին, Արեաց աշխարհն անգամ մեծ ֆեասներ կրեց այդ կրօնից. թէև նախորդներիցս շատերն հալածանքներով դիմադրեցին, բայց չկարացին իւրեանց նպատակին հասնել, Այս համաճարակ հրդեհը շիջուցանելու, այս փտած գահս վերանորոգելու միակ միջոցն է իմ հպատակ ազգերն, իմ հարևան տկար տէրութիւններն մեր Մազդեզանց կրօնին միացնել, ի մի ձուլել. վասն զի ազգի ամբողջութիւնը պահելու և տէրութեան գահը մշտնջենաւորելու միակ նեցուկը կրօնն է,

(ՄԻՀՐՆԵՐՍԷՀ ԷՍԴՆԷ.)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՅԱՂԿԵՐՏ ԵՒ ՄԻՀՐՆԵՐՍԷՀ,

ՅԱՂԿԵՐՏ.

Արի՛, արեաց պարծանք, հաւատարիմ վզուրկ Միհրներսէհ, Միհր աստուածն այսօր մի բարի խորհուրդ յղանալ տուեց ինձ, այսինքն, թէ Արեաց ազգի գոյութիւնը և փառքը մշտնջենաւորելու և թէ միանգամայն իմ հրպատակ ազգաց միտքն ու հոգին լուսաւորելու համար հրամայել բոլոր աշխարհաց, միմիայն Մազդեզանց օրէնքն ընդունել, երկրպագել Արեգական և Կրակի, ի բաց թողուլ իւրաքանչիւր մոլար աղանդներ, մանաւանդ Քրիստոնէութիւնն, որ օր քան զօր սկսել է տարածուել, մինչև անգամ Արեաց աշխարհի մէջ, իմ նախորդաց անհոգութեամբ կամ տկարութեամբ,

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Մազդեզանց և Արեաց Տէր արքայ, այդ խորհուրդը, այդ նպատակը արդարև աստուածական է և Միհր աստուծոյ ազդեցութիւնն է, որով յոր-

դորումէ Ձերդ Քաջութեան ամենայն ազգ և լեզու մի Զրադեշտական ուղիղ կրօնիւ լուսաւորել։ Տէր իմ, զուք այո՛ իրրև մարդ բնակումէք մարդկանց մէջ երկրի վերայ, բայց ձեր միտքն ու կամքը և կարողութիւնն աստուածական է, արդէն աշխարհի երրորդ մասն իրրև մի ոսկի խնձոր ձեռքումդ բռնել էք և կարօղ էք առանց դժուարութեան և արդելքի հանդիպելու շարժել զայն ըստ կամաց ձեր և աստուածոց։

ՑԱՋԿԵՐՏ.

Մեզ սահմանակից կամ հպատակ ազգաց մէջ առաջին համարուելու պատիւն ունի Հայաստանը, որի մաքուր օդի և անմահական ջրի զօրութեամբ միշտ դիւցազներ են ծնել. Հայոց քաջութիւնն ու հաւատարմութիւնը շատ բարձր է և գրեթէ հաւասար Արեաց ազգի և Սասանեան տոհմի քաջութեանը, ուստի յիմարութիւն է թողուլ այնպիսի քաջաց տգիտութեան խաւարի մէջ կորչել, հակառակ աստուածոց կամաց. Հայեր, այո՛, արժանի են Արեգական, Միհր աստուծոյ և Որմզդի որդի համարելու, բոլորովին մեզ հետ միանալով կրօնիւ, լեզուաւ և ազգութեամբ։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Այո՛, Տէր արքայ, Հայեր արժանի են այդ մեծ շնորհաց և պատուոյն. երբ նոքա լուսաւորուին, կմերժեն անշուշտ Յունաց կայսեր մոլար աղանդն, որով և կրկտրեն նորանից քաղաքական յարաբերութիւնները, կմիանան Արեաց մեծ ազգի հետ հոգւով, կրօնիւ, ազգով և լեզուաւ. ապա այն ժամանակը ամեն ազգեր փոքրիկ գետերի պէս դէպ ի մեծը կդիմեն, այսինքն դէպ ի Հայեր և կթափին Արեաց լայնածաւալ ծովի մէջ։

ՑԱՋԿԵՐՏ.

Ազգերը ի մի ձուլելու տիրապետող ազգի հետ միակ միջոցը կրօնն է և լեզուն, Հայեր այդ երկուքն ևս շատ պինտ են պահպանում. իրրև անառիկ պատնէշ կանգնեցին Սահակ և Մեսրոպը իւրեանց գիւտերով, Հայոց լեզի, դպրութեան պահպանութեան համար տառեր հնարելով, որ այժմ ընդհանրացել է Հայաստանի մէջ, նոքա շատ հեռատեսութեամբ դիտեցին ապագայ վտանգը և շուտով պատրաստեցան. Վռամշապուհն ևս շատ օգնեց այս մասին, չխնայեց ոչ աշխատութիւն և ոչ դանձ. վերջապէս մինչդեռ Հայոց կրօնական և քաղաքական ոյժերը միացած են, մեզ շատ աշխատութեան պէտք կայ. բոլոր յանցանքը իմ նախորդացս է, որ շուտով չխափանեցին Հայոց դպրութեան ջանքը. հրդեհը նոր սկսած միջոց սակաւ աշխատութեամբ է հանդչում, երբ ճարակումէ մեծ աշխատութեան է կարօտում։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Արքայդ Արեաց, ամենայն դժուարութիւն կխանարհի Որմզդի կամաց, ամենայն նախապատրաստութիւն կսչնչանայ ձեր քաջութեան և հնարագի-

տութեան առաջ. բաւական է որ տիրաբար և աստուածաբար հրամայէ, հրամանդ և կատարուին մի և նոյն է համարեա, շատ հեշտութեամբ կարելի է Հայոց կրօնական և քաղաքական միութիւնը բաժանել, բաւական է Սիւնեաց իշխան Վասակ Մարզպանին խոստանալ մեծ իշխանութիւն, բաւական է որ Սահակի և որ նոյն է Պարթևաց տոհմից կամ նոցա աշակերտներից խլի հոգևոր իշխանութիւնը և տրի տգէտներին, այսպիսով նոքա ինքնին կդիմեն դէպ ի մեզ. Արդէն Վասակայ փեսայ Վարազվաղան ի սրտէ ընդունել է Մազդեզանց կրօնը Վասակին ՀԵՏԱՍԵԼու դիտմամբ, Վասակն ևս թէ իւր ոխերիմ թշնամուն յաղթելու և թէ միանգամայն Արեաց արքայիցդ աւելի պատիւ և փառք ձեռք բերելու յուսով կամաւ պիտի ընդունի մեր կրօնը, և աշխատի տարածել Հայաստանի մէջ.

ՑԱՋԿԵՐՏ.

Կեցցե՛ս, Արեաց հաւատարիմ Վղուրկ, ես բնաւ սխալած չեմ իմ ընտրութեանս մէջ, զքեզ ինձ խորհրդակից ընդունելով և ընդհանուր հրամանատար կարգելով, վասն զի քո իմաստութեան և հնարագիտութեան վերայ մոգպետան մոգպետն է զարմացել. ես արդէն քո առաջարկութեամբ հրաւիրել եմ Հայոց այրուձին մեզ օգնելու պատրուակաւ, բայց Քուշանաց դէմ ընդ երկար պատերազմը միջոց չտուեց ինձ միութեան գործն սկսել, որ մինչ ցարդ երկարեցաւ ի ՀԵՏԱՍ Արեաց. բայց ահա եկաւ և Որմզդան մոգպետը.

(Մոգպետը մտնէ).

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՈՐՄԶԴԱՆ ՄՈԳՊԵՏ.

ՑԱՋԿԵՐՏ.

Ե՛կ, աստուածոց բարեկամ, ժամ է միութեան գործն սկսելու, որոյ համար շարունակ թախանձում էիր.

ՄՈԳՊԵՏ.

Աբբա՛յ քաջ, աստուածները՝ որ քեզ իշխանութիւն են տուել տիրել ծովու և ցամաքի, ամենայն ազգ և աղինք քո գաւազանի ներքոյ ընկճել են ի հնազանդութիւն, այս ամեն բարեաց փոխարէն պահանջում՝ են քեզանից միմիայն իւրեանց փառքն, այսինքն բառնալ ամենայն մոլար աղանդներ աշխարհի երեսից և միայն Միհր աստուծոյ, Արեգական և Վռամական կրակին երկրպագու անել աշխարհը ըստ օրինաց Մազդեզանց.

ՑԱՋԿԵՐՏ.

Վկա՛յ լինին ինձ աստուածք, որ նոյն իսկ այսօր պիտի հրամայեմ խստութեամբ բոլոր հպատակ ազգերիս, թողուլ իւրեանց մոլար աղանդները, դուրս գալ խաւարից, միայն Միհր աստուծոյ, Արեգական և Վռամական

կրակին երգրպագել ըստ մոգական օրինաց. իսկ Հայերն իւրեանց քաջութեան և հաւատարմութեան համար իբրև Սասանեան տոհմ համարել. Նոցա իմաստուն կրօնապետներն մոգաց տոհմի հետ միացնել, որպէս զի Նոցա խելացի և հեռատես կառավարութեամբ և ջերմեռանդութեամբ Մազդեզանց օրէնքը համայն աշխարհին տիրէ, քանի անպակաս է լոյս և ջերմութիւն Արեգակից, անպակաս լինին և Նորա երկրպագուներն.

ՄՈԳՊԵՏ.

(Ոտքի ելով ընկնելով) Արեաց տէր, Մազդեզանց քաջ արքայ, այսօր զու բոլորովին փոխուած ես երևում ինձ, աստուածացել ես, փառք քեզ և երկրպագութիւն, (ոտն ընկնելով) զոհեր մատուցին քեզ, Յազկերտ անուան էլ մեհեան շինուի, Յազկերտի սուրբ պատկերն էլ թող երկրպագուի հաւասար Միհր աստուծոյ.

ՅԱԶԿԵՐՏ.

Ե՛լ Որմզդան մոգպետ, բարեկամ աստուածոց, առատացուր կրակի զոհերն սպիտակ ցուլերով և գիսաւոր Նոխազներով, պարգևատրիր մոգերին, որ խրախուսուին իւրեանց սուրբ կոչման մէջ, և պատրաստուին գնալ Հայաստան և ուրիշ աշխարհներ քարոզել և լուսաւորել.

ՄՈԳՊԵՏ.

(Ոտքի ելով) Փառք ձեզ անմահ աստուածք, երկարեցրէք ծիրանաւոր կեանքը, տեսնել զձեզ համայն ազգերից երկրպագուած. գնամ զոհեր մատուցանել, (Ծնկելով) կարծես թէ տկար ոտներս ոյժ առին, երիտասարդ դարձայ (կը մեկնի).

ՄԻՀՐՆԵՐՍԵՀ.

Արեաց տէր, այս զոհագործութեան հանդիսին Հայ ձիաւորաց առաջնորդ Ատոմ, Մանաճիհր և Գարեգին ևս մասնակցելու շնորհ.

ՅԱԶԿԵՐՏ.

Հրաման է Նոցա այսօր ինձ ներկայանալու.

ՄԻՀՐՆԵՐՍԵՀ.

Շնորհ արքայի է. (կը մեկնի).

ՅԱԶԿԵՐՏ (առանձին).

Գործի սկիզբը կիսով չափ կատարել է նշանակում, ուրեմն այս խորհուրդ համարած գահս այսօր սկսում է նորոգել, թող ինձանով փառաւորի Արեաց ազգն ու Սասանեան տոհմն.

(Միհրներսեհ և Որմզդան կը մեկնեն).

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՑԱԶԿԵՐՑ ՄԻՀՐՆԵՐՍԷՀ ԵՒ ՈՐՄԶԴԱՆ ՄՈԳՊԵՏ.

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Հրամանաւ արքայի համայն Արեաց աշխարհ այսօր ուրախութեան հանդէս պիտի կատարէ, իբրև դարազլուխ պիտի արձանագրուի արքունի դիւանատան մէջ այս փառաւոր օրս.

ՈՐՄԶԴԱՆ.

Համայն արեաց աշխարհի ատրուշանաց աւետաւորներ ուղարկեցի, և Հրամայեցի պալատի Ատրուշանին հազար ցուլ և հազար նոխազ զոհել.

ՑԱԶԿԵՐՑ.

Իսկ Հայաստանը. . . .

ՈՐՄԶԴԱՆ.

Հայաստանի լուսաւորութեան համար ահա բերի Մազդեզանց օրինաց սուրբ մատեանն Զանդիվեստայն, (Ս-ՅԷՅ Դ Մ-Է-Զ-ՐԻ-Յ ԴԾ ԷՏԷ+ Հ-ՆԷԼ-Վ ԵՒ Հ-ՄԷ-ԲԷԼ-Վ) սորանից քաղելով հաւատոյ էական կետերն ուղարկեմք նոցա, որ կարդան լուսաւորուին և փրկուին.

ՑԱԶԿԵՐՑ.

Բարի. ուրեմն և ես մի ինքնագիր հրովարտակաւ յորդորեմ Հայ Նախարարաց, Թագուլիւրեանց մոլորութիւնն ու դիմել մեր ճշմարիտ և լուսաւոր օրինաց. իսկ դու Միհրներսէհ, գրիր համաձայն կամաց և թելադրութեան Որմզդան մոգպետի. (Ի-Ի-Ի ԷՐԷԼ).

ՈՐՄԶԴԱՆ ԵՒ ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Օրհնեալ են կամք աստուծոյ և արքայի (Ի-Ի-ԷՆ ԷՐԷԼ, ՈՐՄԶԴ-Ն ԷՏԷ+Ը ՅԷ-+Ը Բ-ՆԱԾ Ի-Մ-Ց Ի-ՐԴ-Լ-Վ ՄԻՀՐՆԵՐ-ԷՀ ԻԸ ԷՐԷ. ԴՐ-ԻՑ ԻԵՐԷԷՆ).

Կեցցէ Ցազկերտ, կեցցէ Արքայ,
Գահն իւր յերկինս Թող բարձրանայ.
Դեն Մազդեզանց յաշխարհ համայն
Թող տարածի միշտ յաւիտեան.
Վառամական սուրբ ատրուշան
Թող բորբոքի միշտ յաւիտեան.
Դրախտի նման Վեհ Հայաստան
Փառք տայ մեծի արեգական.
Կեցցեն մեր մոգք, կեցցեն Զանդիկք
Կեցցեն յաւէրժ յաղթող Պարսիկք,
Փառք արեգին միշտ անպակաս.
Միհր ու Որմիզդ կայցեն ի կեանս.

ՑԱՋԿԵՐՏ.

(Ա--բրելով) ահա այս հրովարտակը համայն ազգեր միոյն Արեգական երկրպագու պիտի անէ. (Ինչո՞ւ է մոռանալով) անմիջապէս ուղարկիր Հայաստան, լուսաւորութեան և միութեան գործը նախ Հայաստանից սկսելու համար.

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Աւարտեցաւ և մեր նամակը, յորում հրաւիրել եմք Հայերին ուշադրութեամբ քննել իւրեանց կրօնի ստութիւնն ու յիմար վարդապետութիւնը և ըստ այնմ դիմել դէպ ի Մազդեզանց կրօնի ճշմարտութիւնն և անսխալ վարդապետութիւնը. երկու ճանապարհ եմք ցոյց տուել նոցա, կամ միառ մի պատասխանել, կամ անմիջապէս պատրաստել Արեաց դուռը գալու. Եթէ աստուածոց իմաստութիւն անգամ ունենան, չեն կարող պատասխանել, հերքել Մազդեզանց օրինաց ճշմարտութիւնը և հաստատել Քրիստոնէութեան մոլար օրինաց վարդապետութիւնը, ուրեմն կամ պիտի ընդունեն և կամ պիտի հարկադրեն Արքայիդ մնա գալ, որ այն ժամանակը աւելի հեշտութեամբ և խաղաղութեամբ կը յաջողի մեր նպատակն.

ՈՐՄԶԴԱՆ.

(Մի յեռին հրովարտին և մի յեռին Միհրներսեհի նամակը բերեն) ահա հրաւէր փրկութեան կորուսելոց, ահա այս հրովարտակը և այս նամակը ազգութեամբ պատուական, կրօնով անպիտան Հայերն Արեաց հետ պիտի միացնեն, ատրուշանաց թիւը պիտի բազմապատկի, Վաղարշապատ, Դուին, Արտաշատ քաղաքներում կեղրոնական ատրուշաններ պիտի կառուցանեն, Վռամական կրակն ամենայն տեղ անշէջ պիտի վառի, արքայն Ցաղկերտ իբրև միութեան հեղինակ պիտի փառաւորի յաւիտեանս ժամանակաց.

(Արշէշ կը դնէ).

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ԱՐՇԷՋ.

ԱՐՇԷՋ.

Արեաց տէր արքայ, ըստ հրամանի ձեր քաջութեան, Հայ Նախարարք — առաջնորդք այրուձիոյն պատրաստ են ներկայանալ արքայիդ.

ՑԱՋԿԵՐՏ.

Հրաման է նոցա պատուով ներկայանալ, այդ հրովարտակն ու Միհրներսեհի նամակը դպրապետին յանձնէ, պատուիրէ՝ որ իսկականներն Հայաստան ուղարկէ, իսկ միւս աշխարհներն պատճէնները ուղարկէ արաղընթաց սուրհանդակաւ.

ԱՐՇԷՋ.

(Որդոնց կառնու հրովարտին -- նամին) Հատ բարի, կամք արքային եղիցի. (կը դնէ).

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Արքայք արեաց՝ պարգև և փառք աւելի գործ են տեսնում քան բռնութիւն, ըստ այնմ և խոստմունքն ու յոյսը աւելի շահաւէտ են ձեր նպատակն յառաջ տանելու՝ քան սպառնալիքը, պատրաստեմք Հայ նախարարաց համար շքանշաններ և առատ ոսկի, խոստանամք տալ նոցա աւելի մեծ պատիւ և իշխանութիւն, որպէս զի գրաւենք միտքները.

ՅԱԶԿԵՐՏ.

Հրաման է քեզ պատրաստել, ինչպէս արժան ես համարում.

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Մի Հայ որսալը մեծ է քան մի օտար ազգի յաղթութեամբ հպատակ անել, արդէն Վասակ և Վարազվաղան Արեաց բարեկամ են, ինչպէս մարմնով նոյնպէս և հոգւով, երկուքին ես պատւով և խոստմունքով գրաւել եմք. այսօր Մանաճիհր, Ատոմ և Գարեգին ես որսալով, գրեթէ Հայոց մի մասն Արեաց հետ միացրած է համարւում. եթէ որ և իցէ եղանակաւ Վարդանն ես միանայ մեզ հետ, գործն արդէն վերջացած կը համարի.

ՈՐՄԶԴԱՆ.

Վարդանայ յամառութիւնն ու իւր կրօնի մէջ ունեցած պնդութիւնը, որպէս ես գիտեմ փորձով, կաթի հետ մտել է հոգու մէջ և հոգւոյ հետ միայն դուրս կը գայ, իսկ Մանաճիհր, Ատոմ և Գարեգին ի մօտոյ ճանաչել չեմ.

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Ահա եկան (դիմաւորում է) հրամեցէք պատւական նախարարք Հայոց.

(Մանաճիհր, Ատոմ և Գարեգին կը մտնեն).

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱՌԱՋԻՆՔ, ՄԱՆԱՃԻՀՐ, ԱՏՈՄ ԵՒ ԳԱՐԵԳԻՆ.

ՅԱԶԿԵՐՏ.

Բարի է ձեր գալուստը, պատւական նախարարք Հայոց, հաւատարիմք Արեաց դրան, ի՞նչպէս է ձեր առողջութիւնը, գո՞հ էք Արեաց արքայէս.

ԱՏՈՄ, ՄԱՆԱՃԻՀՐ ԵՒ ԳԱՐԵԳԻՆ.

(Գլուխները խոնարհացնելով ի նշան երկրպագութեան)

Ողջ եմք շնորհիւ Աստուծոյ, և հաւատարիմ ծառայք Արեաց արքային.

ՅԱԶԿԵՐՏ·

Ձեր քաջութիւնը՝ հաւատարմութիւնը և տիրասիրութիւնն արժանի են մեծ պատւոյ և փառաց՝ ուստի և ես կամենում եմ վարձատրել և խրախուսել զձեզ· Միհրներսեհ՝ յաղթութեան և հաւատարմութեան շքանշաններ տուր այս պատւական նախարարաց։

ՄԻՀՐՆԵՍԵՀ·

Արժանի են այդ շնորհաց (Լէ. Գէնէ)։

ՅԱԶԿԵՐՏ·

Ապերախտութիւն է չգնահատել աշխատաւորաց անձնանուիրութիւնը՝

(Ողջունելի է)։ Ս. Գնունի·

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ·

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՐԱՒԷՐ

Մարդկանց միութիւնը որպիսի և իցէ ձեռնարկութիւնների մէջ մի անդիմադրելի ոյժ է, ոյժ՝ որի դէմ լուծւում դիւրանում են ամենայն դժուարութիւններ։ Ընդհանուր ազգաց պատմութիւններին փոքր ի շատէ տեղեակ անձն ակնյայտնի տեսնում է թէ՝ այս միութիւնը ինչ հրաշքներ է գործել մարդկանց ամենատեսակ ձեռնարկութիւնների մէջ։ Այո՛ նոյն ինքն Վերին Տեսչութիւնը մարդկանց կեանքի երջանկութեան աղբիւրը սահմանել է նոցա միութեան՝ իսկ թշուառութիւնը բաժանման մէջ։

Ժամանակի ձախողակի հանգամանքներով ի սփիւռս աշխարհի տարացրւեալ մեր Հայ ազգն ևս դառն փորձերից զգաստացած ներքին համոզմամբ ընդունելով այս անտարակուսելի ճշմարտութիւնը, մանաւանդ այս վերջին տասնեակ տարիներում ի